Չորրորդ Տարի

# ԽԱԹԱԲԱԼԱ

Գինն է 10 կ. Գաւառներում 12 կ. 1909. Շաբաթ, Յուլիսի 18-ին. Թիֆլիս. №29.

ԱԶԳԱՅԻՆ ՄԵԾ ՓԱՌՔԻՑ.



Մեր հնուց փառքից մի բան միայն ունենք—դա հայ եկեղեցին է, որ որպէս կոթող նախնի մեծութեան գլուխ կանգնած [illegible]. Նրան ջանացին քանդել թշնամիք, բայց չըզօրեցին. իսկ հիմայ ցաւով պիտի տես էլ [illegible] որ քանդել են ջանում իր իսկ զաւակները։

Тип.-Лит. С. Быхова, Тифлис.

[illegible]




Թոյլատրւում է լոտօյ խաղալը. ժողովարաններում, ուշ գիշերին և՝ յատուկ սենեակների մէջ. ուստի առաջարկւում ենք Թիֆլիզի կէկէլ-ժամիլօններին հարկաւոր իրերը՝ անկողինը և երեխաներին էլ հետը վերցնել և այնպէս գնալ լոտօյի խաղերին։

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃՈՒՐՋԸ



ԼԻԱԽՈՎԸ.—Այս «դաւթարը» պէտք է ոչնչացնել. այսուհետև Մահմէդ Ալի Շահից ոչինչ ունեմ ստանալու, հիմայ հարկաւոր է նոր դաւթար. որտեղ նշանակեմ Սեփահդարից ստանալիք գումարները։

## ԱՐԻՒՆԱԲՈՒՆ



—Զարդեմ, տորեմ, գլուխ քաղկ ու գազար։

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՈՒՄ Է 4 Տարի

# „ԽԱԹԱԲԱԼԱ"

Երգիծաբանական-սատիրական շաբաթաթերթի

4 Տարի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Նոր գրւող բաժանորդները թերթը ստանում են № 1-ից

| | |
|---|---|
| Տարեկան գինն է Թիֆլիզում 4 ր. | Դուրսը և Արտասահման 5 ր. |
| Կէս տարւանը » » » » 2 ր. 50 | Կէս տարւանը » » 3 ր. |

Խմբագրութիւնը բաց է՝ երբ փակ չէ, եւ գտնւում է Պուշկինսկայա փ. № 1

Մեր հասցէն՝ Тифлисъ, Редакція „Хатабала".

Արտասահմանից՝ Tiflis (Caucase) Rédaction „Khathabala".

Խմբ. հրատարակող՝ ԱՒՏ. ԵՐԻՑԵԱՆ

Յուլիսի 1-ից մինչև տարւայ վերջը «Խաթաբալան» արժէ 3 րուբլի, իսկ նաղդ՝ 2 ր. 50 կ.

## ՇՈՒՔԻ ԶՕՐՈՒԹԵՆԻՑ

Իփ վուր Աստուծ վիկալաւ հուղ, ջուր ու էստունցմէն աշխարքը ստիղծից, հրամանք արից, վուր էս աշխարքի վրէն թայիր թայիր ժամանակներ ըլին, մէ արդ ձմիռ ըլի, մէ արդ ամառ, մէ արդ աշունք ըլի, մէ արդ էլ գարունք, ու էս էնենց ստիղծից, վուր քու հաւնածը։

Ձմիռը ինչի համա ստիղծից, վուր ցուրտ ըլի. ամառն էլ էնդուր, վուր շուք ըլի ու խալխը շուքի ու ցրտի թափաութը. վունց վուր լաւն ու վատինը՝ գիդենայ։

Մ՚ոչ։

Աստուծ կինք տայ մեր Աստծուն, չունքի ինչ վուր նա մոգոնիլ է, գիփ էլ լաւ բաներ ին։

Շուքը ինչ է. շուքը, շուքը խօ մէ փաթերակաւուր բան է. համա էլի ինչ վուր չլի, լաւ բան է։ Շուքը վուր չլի, մինք շատ բաներ չինք կանայ իմանայ, շատ բաներ չինք կանայ տեհնի, շատ բաներ կան վուր չին էրեւայ ու չին էլ համնի։

Ցուրտն էլ էնթաւուր է. աղա ցուրտը վուր չլի՝ մարթս ինչ կու իմանայ շուքի զադրը, շուքն ու ցուրտը էնենց ին. վունց վուր լաւ ու վատ մարթը։

Լաւ մարթը խօ լաւ է. ու թէվուր խիստ էլ լաւ է, մինչկի էն չախը լաւ է, վուր լուրու հանգը բան է՝ դա էլ զարար է. ինչի, անչափ լաւութինը, վունց վուր համփրութինը՝ թէ վուր չափից իշութին, իշի մարտիրոսութին է։

Ինչի, չունքի լաւ մարթի գլխին էնենց ին նստում խալխը, էնենց ին մատարում լաւի գուրձն ու արքը. կօսիս Չինգիզխանի արաքը ըլի։

Ցուրտ՚ը, ցուրտն էլ էն թաւուր է. վունց վուր մէ փիս, սատանի, խիստ մարթը. վուր մաթրախը ձեռին կաշին քերթում է, մարմինը կապտեցնում, գամփիր նստեցնում, ու մարթս էլ իփ վուր գուզէ դրամէն պաշտպանէ, չալիշ է գալի, քուլաջու, պալտօյի, բարօքի ու եափնջու մէջը էնենց է պահւում, պաշտպանւում, վուր իրեն զարար չգիփչի։

Մէ մէ մարթ վուր կայ, ասում է՝ էսօր խիստ շուք է, ուֆ. եարաբ իփ կու վիրջանայ. մէ քիչ հովիրը նրնգնի, էստուր մէջ եանըլիշ է գալի, խունց վուր էն մարթը, վուր ասում է լաւ մարթի համա, եարաբ իփ կուլի, վուր էս լաւ մարթը մէ քիչ զարարութին չանց տայ, մէ քիչ խիստ ըլի, վուր աշխարքը գնջանայ։

Ինչ վուր ասում իմ, իմանում իք, թէ էնա գլխներդ իք արմաղամբեցնում, վունց վուր էրկու իրիք տարի առաջ ասվիլ իք, իփ վուր էն ջահիլ ագիտատորնիրը բաներ էին ասում, խա էլ ձիդ էլ մանկ տալի ու տեհնում էի, թէ վունց գլխներդ արմաղամբեցնում իք։

Մէ բան էլ հարցնիմ, ամութ չլի գեթարւայ։

Մարթուս մէ իրմին վուր ասում ին, վուրից ինքը վունչիչ չէ իմանում, ինչի՞ է գլուխը արմաղամբեցնում գիշիր, խալխն էլ էտենց է։

Ա՞յ խուակի գէլիշ, վուր իս վիկենամ ու ձիդ էն թաւուր բան արդա անիմ, վուր գլխներումդ դժար մանելու ըլի. դուք խօ չիք վիկենայ ու ասի թէ՝ Գասպար աղա. էտ բանը դժար մանելու բան է մեր գլխումը, էտ բանը մի ասի, ուրիշ բան արդա արա—չէ չիք ասի. դրա մագիէր կու վիկենաք ու իմ ասածնիրը անլիր կու սովրիք, իժում Բլիաձէի հանգի դուք էլ խուակիրս կու կրկնիք, կու վրայ տաք միակը չիմացած ու կու ստանաք էն վուր, լողը ան եաքը կու գիդենայ, թէ դուք ամէնքդ փիլիսոփաներ իք, դուք ամէնքդ մէ մէ պրոֆեսուրնիր իք։

Ինգլիզնիրու աշխարքումը մէ լաւ մարթ ապրելիս է էլի, արամէն եարսուն քասսուն տարի առաջ. անուն էլ էլիլ է Ճամս Դարւինի աղայ Չարլզ, անումիցն էլ էրեւում է, վուր խիստ չարն է էլի, ինչ խուակ վուր խելօք էլ կուլէր, չունքի չար մարթիքը խելօք էլ ին ըլում. համա կան էն թաւուրնիրն էլ, վուր չարութենի ժուզը մէ էնենց գժութին ին անում, վուր էրկու հազար տարի չալիշ գան, էլ չիս կանայ գուրձին ստկի. այ, մինք հայիրս ինչի ինք էտենց. մեր գուրձիրը, ասկային է թէ հոգեւորական, լուսաւորական է թէ չկօլական, մալւրային է թէ իրիցփոխանական, ամուսնական է թէ վարժապետական, աջափառնդայի հանգն է ճանցի, էսափ էրկու խուակ չի ասի թայիր թայիր, չունքի մինք համ խելօք ինք, համ չար ու չարութենի ժուզը վուր խիլը ինք բանեցնում, էստու համա էլ չինածը քանդում ինք։

Բաս վո՞նց գիդիք, էս ինչ՚մէն է. էս բանը խանդիխաւն շուքիցն էլ է գալի։

Թէ վուր խիստ շուք է ուրիշ բաներ էլ է ըլում, շուքեմէն մարթս մեռնում էլ է, գժւում էլ է։

Հա էն էի ասում, էտ Ինգլիզ Չարլըզը ասիլ է, մարթս, կօսէ, մայմունից է առաջ էկի, կօսէ, ուրիշ խուակով մարթս մայմուն է, կօսէ։

Վո՞նց իք հաւնում, հա՞։

Հիմի դրան վուր ուստանք, մեր

գուրձիչները, միր փրգիչները, միր ուչիտլները, միր... գիփ, գիփ մայմունները ին էլի։

Վա՜յ մէ, վա՜յ մէ, էտ վո՜նց կուլի։

Իս վո՜նց կու ասում, վուր միր խնամունց աղէրքը, միր համփան նընգրոտները, միր խմրագիր աղէքը, միր մէնձամէնձ ադվուկատները, միր հարուստները, միր ակըրակը-իրիցփուխները աղաք մայմունները ին էլի։

Փիէ՜։

Վո՜նց թէ մայմուն—բաս Զարլզ Դարւինի խոսկով սրանք մարթիք չին էլի։

Ա՜յ քիզ օյին։

Տօ, վո՜նց թէ մարթիք չին էլի, բաս Աստուձ վուր ուզենար, գէմուգէմ սրանց մայմուն չէր կանայ ստիղծի. էլ ինչի էր մարթու սիփաթ տալի ու մարթու հանգի էլ լիզու, ձեռք, շնուրք գլուխ ու փուռնիր...

—Էտ գիփ կուլի, կօսէ, ասիլ է Զարլզը, ամա թէկի բանականութին չկայ, կօսէ, Աստուածորդութինը խիստ հեռու կուլի, կօսէ։

Ինչ խուսկիր է. Է․ արի ու էսափ բան իմացի. համա հիմի իս, էս էրկու խուսկը չափի, դուք էլ կիմանաք թէ՝ բան իք իմացի, էնչախնաեթ անգիր կու սովրիք ու ով գիդի ամեն տիղ էն ասիք, թէ մարթս մարթ չէ, մարթս մայմուն է։

Շուքի ժուգը, գիփ ըլում է. էնօրը իս մէ մարթ տեհայ գորոգի ուլիցի տակին, խիղճը էնենց էր բռնել շուքեմէն, վուր միխկս էկաւ։

—Դու գիմ գնայ կօսէ, ան էջմիաձին, ան Թէյրան, ան Ստամբոլ ու ան Պետըրբուրգ, կօսէ։

—Իս էլ ասի, ինչի իս ջափա քաշում, ասի. վուր գնաս Կօջօր, ուփրօ լաւ կօնիս, ասի։

—Կօջօրումը, կօսէ. հավ է։

Ի՞նչ իս հրամանք անում, ասի, մէ մէ ջէր հեատի հավ է անում, կոսիս զուբերնատորը արեգատեյնի պօստանովլենիա ըլի, ասի։

—Մաշ կեհամ, կօսէ։

Էքսի օրը թողած Թէյրան, Էջմիաձինը, Ստամբօլն ու Պետըրբուրգը նըստիլ է ափտոմօբիլ է, թէ ինչ վուր պանրումար է ու գնում էր Կօջօր։

Հիմի էնդի նա լաւ կուլի։

Ա՜յ Շահը, ան Սուլթան Աբդուլը մէ մէ զամ վուր Կօջօր գային, նրանք էլ կու լաւնային։

Բօրժոմն էլ լաւ է, համա էսափ սաւտ կնիազնիրու համա, ուփրօ պէտաքական է

Էրանի էն մարթոց, վուր իրենց օղլուշուղին ամառը դաչէք ին դրգում, իրենք կի էսափ շուքի մէջ էրւում, խորւում ին։

Թախկումը էս շուքի հիդ, վուր կնիկդ էլ էսափ ըլի, խօ խասակ կու մեռնի նաչար հայ քրիստոնէն, վա, բաս էլ Աստուձ չկա՜յ։

Միր պարտիէքը, վուր հազար մէ թաւուր պրագրամա-մրագրամա էին մօգօնում, հուզիրը բաժնում էին, ջրբիրը ցամքեցնում, օթր խոսակում, Դումում չլէննիր դրգում, չկլէքում իրենց մարթիք կողնեցնում, ռանչպարին խիլք սովրեցնում, բանուր մշակ խալխին իրա շահը շանց տալի. միր տէրութինը վուր ամեն բանին տէրութին է անում, Եապօնիեմէն մինչև Արխանգել, էստուցն էլ մինչև Գուրիշկևիչի հայրենիք, Թիֆլիս, Իգդաչիլ էստղանց էլ Կուկազ, Նախիչևան, մինչև Սամարկանդ ու Կոկանդ, Բուխարա ու Կիրգիզխան իրա ձիռին է առէ, վուր Դումա ու Ղոսուդարստենի Սովէտ է մօգօնի, պիտին մէ լաւ պրօգրամա էլ մօգօնի, մէ էն թաւուր պրօգրամա, վուր խալխին շաղաւաթ ըլի. ասկի համա էլ լաւ ու տէրութենի համա կլի ու կլի։

Տարեկան մէ ջէր մարթ ու կնիկ իրարմէն բաժնւին, վից ամիս մարթ ու կնիկ ըլին։ վից ամիս չէ։

Զունգի էս սահաթիս մարթ վուր կնգայ հիդ ապրում է, Զարլզ Դարւինի մայմունի հանգը նրամէն շատ բան կու սովրի, վուր ինկի իրեն մէ դրօշի օքում էլ չի տայ, կնիկն էլ խօ խատակ վուր մայմունի հանգը ինչ տեհնում է, էնչախնաեթ սովրում է. ու էս բաները ամառները, շուքին խիստ է թռում։

Իմ ուզումով լաւ կուլի վուր, էսու համա մէ արեգատեյնի պատանովլենի գրւի ու մէջը ասւի.

—Էն մարթ ու կնիկը, վուր խիստ մէրով ին ապրում, ամառը շուքին պիտին բաժնւի իրարից, վուր էլի սիրով ապրելու չարա ունենան։

—Էն մարթ ու կնիկը, վուր խիստ կռւում ին, ձմիռը մէ օթախում պիտին ապրի. վուր մէկմէկու խասիաթը սովրին ու էլ չկռւին։

—Էն մարթ ու կնիկը, վուր գուզին բաժնւի իրարից. դրանց ջնջլով կապին ու Քուռը գցին, ով կու խիխտւի թող խիխտւի, ով կու ազատւի, նա խօ ազատ կուլի ու կուլի։

—Էն մարթ ու կնիկը, վուր ամառ ձմիռ մէ գլուխ ազունակների հանգի ապրում ին ու ակռաների տօլ էլա շնուրք չունին, դրանց իրիք ամիս արեգատեյնի կօնցիստորեներում գնալ գալը թող տրւի, վուր աշխրքի լաւի հիդ վադն էլ իմանան։

—Ու ով էս բաները չի կատարի, նրանց իրիք ամիս ան բիրթ նստեցնին, ան իրիք հազար թումանը շտրաֆ առնին։

Հիմի էս ինչի ասեցի, չունքի շուք է. շուքեմէն ամեն բան ըլում է։ Ով գիդի էլի ինչիր կուլի։

[illegible]

---

## ՏԻԻՏՁԵԻԻՑ

Այս առաջին անգամը չէ՛,
Որ յուզւում է Արևելք.
Առաջինը չէ՛, որ այնտեղ
Խաչ են հանում Յիսուսին,
Եւ զանազան եղջիւրներ
Մանգաղաձեւ լուսնեկին—
«Խաչից» իրանց փախաններով
Լոռ ծածկում են վեհացեալ.
«Ի խաչ, 'ի խաչ հանիր նորան»
Ձայն է հնչում—մոլեգին—
«Զարչարանց եւ զհրովհեան
Մասնի՛ր նորան վերջացին»։
—Ո՛վ Ռուս, միթէ՞ դու չես լսում
Այս ձայները—բուռանդ
Եւ ձեռները կը լուանաս
Պիղատոսի սառնութեամբ.
Չէ՞ որ անմեղ այս արիւն
Քո ուսի՛ց է ծածանում...

Լիլիպուտի

---

## ԳԱՏԻԿ ՖԷԼԻԷՏՕՆ

*«Ի գիտութիւն ուսուցիչների»*

Իմ ծանօթ հոգաբարձուն հետեւեալ նամակն է ուղարկել ինձ Կարսի գիւղից.

«Ուսման տարին վերջացաւ և մեր վարժապետին երկար կռիւներից յետոյ, ճանապարհ դրինք, պայման կապելով, որ նա իր ռոճիկից զիջի 30 ռուբլի, իսկ մնացածը ստանայ մինչև յունուար։ Միւս տարւայ համար չենք հրաւիրելու նրան. վատ մարդ էր՝ շարունակ ռոճիկն էր պահանջում, կար-

ծեր թէ դրա համար էր եկել, և ոչ թէ մեզ ծառայելու։ Ինչ և է, այժմ դիմում եմ Ձեզ որ մի լաւ տղայ գտնէք մեր դպրոցի համար։ Ռոճիկը տարեկան 300 ռուբլի է, որը կը ստանայ ամէն ամիս, սկզբումը 50 ական կոպէկ, իսկ երբ կը վերջացնենք նախկին ուսուցչի պարտքը, այնուհետև կը տանք ամիսը մի ռուբլի։ Վարժապետը պէտք է դերասանութիւն էլ իմանայ, որովհետև մի քանի անգամ պէտք է թատրոն խաղայ և «խորհուրդ մեծ» ման գայ և այդպիսով, թէ նախկին ուսուցչի և թէ իրեն ռոճիկը հաւաքի։ Այդպէս լաւ է, թող մարդ ինքն իր ռոճիկը ճարի, որ փողի դարդը իմանայ։ Բնակարան էլ կը տանք, դպրոցի կողքին մի հին կիսաքանդ տուն կայ, որի մէջ ողորմած տէրտէրակինը հաւեր էր պահում. ինչ կայ, ջահէլ տղայ է, եօլա կը գնայ. Մեր կոյր մզզաին էլ ծառայ կը լինի. խեղճը շատ է պառաւել, աչքը չի կտրում, ամիսներով կերակուրի համ չի տեսնում, լաւ է վարժապետի մօտ մի կտոր հաց կուտի, վարձք է հոգու համար։ Վառելիք ինչքան ուզի կայ. ջահէլ տղայ է, թող սայլը լծի, գնա անտառ, մի երկու մանէթ որ տայ, երկու սայլ փայտ կը բերի։ Հա, քիչ մնաց մոռանամ. մի որբ աղջիկ էլ կայ, մեղք է, անտիրական է մնացել, վարժապետին կը տանք, մի օրի կարժանանայ, կը բաղդաւորուի։ Էլ ինչ ասեմ, լաւ տղայ կը ճարես, ուսումնական, ամեն լեզու իմացող, (էն ծախ լեզուն էլ թող իմանայ, որ գրքումը գրած է)։ Լրագրներում էլ մի լաւ, ինչպէս որ դու գիտես, յայտարարութիւն կը տաս։ Մնամ Ձեզ յարգող Կիրակոս Մլթոնեան։

Նամակն ստանալու պէս ուղարկեցի լրագրներին հետևեալ յայտարարութիւնը. «Կորած գիւղի դպրոցի համար հարկաւոր է մի ուսուցիչ, համալսարանաւարտ, լեզուագէտ և հմուտ մանկավարժ. ռոճիկը 300 ռուբլի, ծառայ և վառելիք։ Դիմել հոգաբարձու Կիրակոս Մլթոնեանին, կամ «Խաթաբալայի» խմբագրութեան»։

Դիոնիս

## ԴԷՍԻՑ-ԴԷՆԻՑ

*Մնամ ի կարծիս*

Սօֆիայնիկ պատգամաւորը հարբած դրութեամբ մտնում է ժողովի նիստերի դահլիճը։

—Պարոններ,—կանչում է նախագահը, ով դէմ չէ այս օրինագծի ընդունելուն՝ թող նստի, իսկ ով դէմ է՝ ոտքի կանգնի։

Պղտոր աչքերով այդ պատգամաւորը, դէգէն հրեց աթոռները և տեղ բռնելով պառկեց յատակի վրայ։

—Այդ ինչ է նշանակում, կատաղած գոռաց նախագահը։

—Ես... մնամ ի... կարծիս, մաթմաթաց պատգամաւորը պառկած տեղից։

*Նախ և առաջ*

Մաքուր օդ շնչելուց յետոյ ամուսինը մտնում է վագոնի կուպէն և տեսնում է, որ մի անծանօթ պարոն, մի ձեռքով գրկել է իր կնոջը, իսկ միւս ձեռքում բռնած ունի վառած սիգար։

—Նախ և առաջ,—կանչում է ամուսինը բարկացած,—երիտասարդ պարոն, այս վագոնը չը ծխողների համար է։

*Հետևողական «Ընկեր»*

Մօսկւա հասնելուն 1 ½ ժամ մնացած՝ ուսանողը արթնացնում է պաշտօնակից հայ ընկերոջը, որը վերին կոյկայի վրայ պառկած խռմփում էր։

—Ընկեր, վեր կաց, մօտեցանք Մօսկւային։

Հայը զարթնելով և վագոնի մէջ այս ու այն կողմը նայելով կարուկ կերպով պատասխանում է։—

—Սկզբունքով չեմ կարող։

—Ինչու։

—Մեծամասնութիւնը քնած է, բարկացած պատասխանեց հայը և նորից քնեց։

*Ճոշ փիլի տարբերութիւն*

Ա. ազգայինը (հարցնում է Բ. ազգայինին) —Բացատրիր ինձ, թէ էլ ինչումն է տարբերութիւնը. եթէ սուլթանի օրով կախում էին մարդկանց՝ կախում են և այժմ, երիտասարդ թուրքերի օրով։

—Բ. ազգայինը.—Ես այս տարբերութիւնն եմ նկատել ռէժիմի մէջ.—երիտասարդ թուրքերը կախում են մի քիչ բարձր և ոչ թէ մետաքսէ, այլ կանեփի թոկերով և դրան անուանում են դեմօկրատիկ կառավարութիւն։

Անեղ Մախաթոփչ

## ՆԱՄԱԿ ՊԱՐՍԻՑ

Գազէթաճի Աղա

Ժանդոտ պղինձ թասի էնելու համար գնացիր էի յաշկերտս հետ Անի, անտեղից ալ յընկանք Շորագեալի գեղանք։ 18 գեղ ժուռ եկանք. ամըթ մէ տեղմ մածուն կերանք։ Ոչ կով ունին, ոչ օչխար։ Մածուն, թան, պանիր, թացան մացան, գառիր է սև ալուէս։ Պատափ գործ հէչ չկայ. գառլները հոբիր են, օր գայ չէղնին։ Կերածները ամթ ցամաք հաց, ան ալ բոլ չէ օր կուշտ ուտին։ Բանի տարի է հացը չի գայ, էգած, չեղած ծախիր, ալրի ին ուտիր։ Աս գեղանու մէջ ժանդոտ պղնձներ շատ շատ կան. համը դալայչի հէչ մէ հատ ալ չկայ. ժանգի մրի մէջ փթիր ին։ Մարթում ասլղ տամ, տեսնիմ, ճանչիս կը։ Ցանկաջ էրէ։ Անթարին անքան կարկտան ունի, օր չիս հաւկնայ թէ թաղայ վախթը. վեր կտորից է էգիր։ Վերարկուն անքան հին է, օր գիտես թէ Նոյ-Նահապետի կնիկն է կարիր։ Շալւար, մալւար չունի. չունքի չոգէ։ Միրուքն ու գլուխը գիտես թէ խօլերի տարուանից ալէյմօր ասօր, ջրի սանդրի յերես չէ տեսիր։ Ղարաքիլիսու մէչան անքան լապատրակ չկայ, վերքան աս հարիֆին միրքին մէջ ինի բանէրէն, (յանկջէղ ըսիմ օջիլ) ան ալ գնդ—գնդ, անաջ—անաջ, կերած—խմած բաներ։ Շատ ալ յերես առած ին. օրը կէս օրին, հարիֆին միրքին մազերուն վրան քէանդրբազութեն կենին կը։ Ձեռները աղտի մէջ ճեղքրտիր, գոշմի ծուռն է դառիր, յարնլւիկ է էղիր. անօթի ճանճերու համար եայլաղ է դառիր։ Մատները բռնօթու, թութունի մէջ ներկւիր, դառիր է զըրը կոճի պտուկներ։ Ալ ինչ գլուխդ ցաւցնիմ. թամամ այլակերպ, տեսնողը խրտնիկը։ Գիտիմ, պիտի հարցնիս աս ինչ մարդ է, ինչ գուլլուղի տէր է։ Աս այլակերպը, յանկջէղ կսիմ կը, ոչ նախրջի է, ոչ հորթարած է, ոչ չոպան է, ոչ պօվրէ... Հըը ինչ է։ Գուղիս աւացի, գուղիս մի ուտնայ. աս հարիֆը տէրտէր է, տէրտէր. շատ ալ զանգին, օխչըրի մածուն ալ աս մարդուն տունը կերանք, Վէհափառն ալ լաւ բխտրու էրից։ Աս տէրտէրը Պօղոսպար Կալատուզովին փէշքեաշ, եա յուրիշին ձեռ առեմ։ Ասիկ էֆէյի գիտնական է, լաւ ալ զուգւած պարգարւած է. բոյը բուսաթը. գլըգլ չէնքը չորքը. սիփաթը..., բիթուն. բիթուն մարթավարի դայտի զանանի. համը ինչ կենիս օր, ասիկ ալ մէ յուրիչ տեսակ Եանի Ղարայի զարկածն է, ասիկ ալ յուրիչ տեսակ գէչ խասիաթ ունի։ Ցաչքը շոռ է. հանկնաս կը։ Զաթուքեասան է. յառու թռնող է։ Գեղը բիթուն գայ է էրիր. բիթուն ժամից խռովիր ին. թայֆայ թայֆայ ին էղիր։ Իրեն տան մէջ լաւ էլ քեօթակիր ին. համը գենայ թարկը չի տայ. գենայ, խօր ինոր յետեից հոտոտալով ժուռ գուգայ կը, խօր, ինոր տուզախի մէջ ցկէ կը։ Ինքը ժամի բեմից ճվայ կը... Մի շնոր. մի գողանար... Հմը խօշոր շնութենը յինքը կենէ կը։ Աս տէրտէրն ալ Գեօղալ-Աղաբաջուն փէշքեաշ։—Գազէթաճի Աղա ջան, խաթերս համար Երւանդ վարդապետին ըսէ. քանի օր աս պէս տէրտէրներ կան ժողովրդի մէջ, հըրաթ ժամը գարտակ մնայ կը։ Ժամի պօչը կարճցնելուն տեղ, թող ասպէս տէրտէրներուն պօչը կարճցնէ։

Ղալայչի Մաղար

## Տ Ի Ի Տ Ձ Ն Ի Ի Ց

(Ադանայի կոտորածների յիշատակին)

—

Դարձեա՛լ արեան մէջ լողում է Արեւելք,
Դարձեա՛լ լաց, կոծ, ամենուրեք կոտորած
Դարձեա՛լ արդար է դահիճը—ցնծացող,
Իսկ զոհերը—բամբասանքի մատնւած։

Ալիպուտ

## ԵՕՎԱՆԻ ԳԱՆԳԱՏԸ

Նէս գիշերին Եօվանը վեր թռաւ անկողնից ու սաստիկ շարացած, սկսեց ինքն իրեն բարձր ձայնով խօսել

—Ախար սրանք ինչ ասիրդծելու բան էին... ա՜ւ, Աթամ, խո քու... մեղայ Աստու, ինչ է գալի բերանս, վունչինչ չիմ ուզի, վուր մեռնիմ ու արքաութին գամ, մէ ինձ քուչումը սաստ գա, մէ լաւ բիարուս անիմ. ափսոր տօ բէուզուփ, քիզ Աստուծ ասիրդծի՞ց. անճար մէնակ չիս եօլա գնում, ագաչանք արիր, վուր քիզ համա մէ օղլուշաղ ասիրդծին, էտ էլ բեղամաղ չարին, իժաւոր կով, գամէշ, գէլ ու աղւէս, էշ, օխչար ու խո ինչ գիդիմ. էատանք էլ ասիրդծիլ ուիր, տօ, բաղլինջը, ճանջը, լուն ինչ էր, վուր ադաչանք խո արի ու ասիրդծիլ խո ուիր, հիմի լաւ է. վուր սրանցմէն դնջութին չունինք. ցերիկը ճանջերու ահեմէն չինք գիդի ինչ անինք, մէկէլ անճար էկու ու ա՞դգ, չիրթմի մոթլարէն նըգաւ, հիմի արի ու իշտահով հաց կեր, մէ-մէ անհամուս ճանջ էլ էնենց է մուխարու գցում ու հիգդ խաղում, կօսիս նրա տօլ ու համքար էլիս, խան բնթից է նստում, խան անգաճդ ժռռում։

Էս ցերիկը։

Գիշերն էլ վուր պառկում իս, լամփէն հանգցնում իս թէ չէ, ըն՛ը, հիմի էլ բաղլինջներն ին գուս գալի ու բալիշիս վրէն էնենց ին վերիւ-ներքեւ անում, կօսիս վրաս գուրձ ունին, թէ մէկին էլ բռնում իս ու վրէն բզաւում,—տօ հարամզադայ ինչ իս ուզում ինձմէն, ինչ իս ջանս ուտում ու չիս թողնում վուր քնիմ. էնենց է ափաթիք մարիկ տալի, կօսիս ուզում է ասի՝—խիստ լաւ իմ անում, իս էլ ձիգմէն իմ սուրի խալխին անհանգստացնիլը ու մութթա ուտիլը։

Ասինք Աթամը եանղլիշ էկաւ ու դրանցը ասիրդծիլ ուէ՞ց, Նոյ նահապետ, դու՞ն ինչ էիր տուտուցանում ու ծարդունի վուխտը դրանցն էլ էիր թարցնում տապանումը, վիրչըն էլ միր ջանին գցում, միր դարդը հերիք չէ՞ր, թէ դուք հէնց գիդիք մինք էլ ձիգ պէս ինք ապրում, վունց վուր դուք իք ապրի՞, վունց ուտելու իք ուր ու վունց հարնելու, մէ գլխներդ վիքաշեցէք ու տեհէք թէ ինչ օրերումն ինք ապրում է՞... Ո՞վ գիդի, դուք հէնց գիդիք, թէ միր կնանիքըն էլ ձեր կնգներանց պէս բոբլիկ ու անդոնգիկ ին ման գալի. դուք ինկի իմացիլ ի՞ք, վէնր, մինձ շլապա, կարզէթ, դուխի, պուդրի, ալիկալօն, կօալէր, սիմպատիա, խծում սարֆանիա, գուլանիա, լօտօ. իմացիլ իք, ո՞վ գիդի էտուանք դուք ուտելու բանից գիդենաք...

Հիմի տօ անաստուածնիր, մինք միր բէստուութինին գիճանք, միր օղլուշաղի ու ախչկերանց դարդարէքին գիճանք, էս շուքին գիճանք, թէ՞ էս աննամուս ճանջերին ու բաղլինջներին, վուր միր օղլուշաղի հիդ խուակը մէկ արած, գիշեր ցերեկ միր արինն ին ծծում։

Օսխար

### ՃԱՆՊԱՐՀԻ ՎՐԱՅ

Հեռու աչքերիդ՝ մի սիրտ մեխիր,
Ծածկիր հայեացքէս՝ լանջդ ալեծիր.
Մարգրիտ քայլերդ մեղմ արագ առնի,
Ուր հոգիս այն տեղ միշտ կը տառապի։

Բոյր ու ալիներն հոգւոյդ ծովերու,
Թռչում են անոնք ինձ մրրկելու.
Սարսափած վախցած՝ աչքերս եմ փակում,
Ու քո ծով սրտի՝ ծարաւն եմ զգում։

Ջէ, բաց աչերդ՝ ժպտէ գեղունիս,
Թողէ կախարդող սրտիդ կատարէն,
Ցաւոտ ու նրբին լարերը սրտիս,
Աղմկէ, յուզէ, թոթուէ հոգեկիս...

Շան-Արմէն



## ՖԵԼԻԷՏՕ՛Ն

### ԱՌԱՋԻՆ ՊԱՐԳԵՒ

Իմ պատմելիքն այն է, որ կատակով անւանում են.

Մի փոքրիկ, բայց ազնիւ մարդկանց ընկերութիւն։

Հայոց աշխատանքներից մի քիչ հանգստանալու համար շատ մօտիկ մարդկանց մի խումբ՝ փող վեր եկան և քաղաքից դուրս անտառում ճաշկերոյթ սարքեցին։

Խումբը նստած՝ ուտում խմում էր։

Ընդամենը չորս հոգի էին. մի կօկօտկա, (թեթեւ վարքի տէր կին), դերասանուհի, մի փաստաբան, մի հրապարակախօս և մի խոզի գլուխ։

Թէպէտ հրապարակախօսն իր համար ժողովրդական անուն ու ազգանուն ունէր, բայց նրան ամէնքն էլ այնպես էին Յուդա կանչել, որ նա ինքն էլ մոռանալով իրա անունը, ձայն էր տալիս, երբ Յուդա էին ասում իրեն։

Ի՞նչ արած. սովորել էր։

Քէֆ անողներն իրանց համար հանգիստ նստած ուտում-խմում էին և իրանց գործերից զրուցում։

Այդ կողմերով մի անծանօթ մարդ անցնելիս, կանգ առաւ, մտիկ արաւ քէֆ անողներին, թքեց ու ճամբան շարունակեց... բայց յետոյ, ինչ որ մի բան մտածեց, գրպանից հանեց մի ոսկէ դրամ ու շպրտեց նստողների առաջ։

Այդ բանից սարսափելի ապշած բարձրացան, սկսեցին կռւել իրանք իրանց. քէֆ անողներից ամեն մէկը կամենում էր իրան սեփականացնել ոսկէ դրամը։

Վերջը խոզի գլուխը, որպէս ի ծնէ խաղաղութիւն գցելու յատկութեան տէր, խիստ նախանձախնդիր սահմանադրական օրէնքների պահպանման, ինքն իրան մտածեց, մտածեց ու արգելելով կռիւը, հետեւեալն առաջարկեց.

—Ձեզ մատաղ, գիտէ՞ք ինչ. ամէնի լաւն այն է, գնանք անցորդին հարցնենք այս դրամն ում համար է, որ գցեց իրենց առաջ...

—Էլ հարցնելն ո՞րն է,—ընդհատեց նրան Յուդան,—ի հարկէ որ ինձ համար էր, որովհետեւ ես ձեր ամենքիցդ էլ լաւ եմ։ Անց քանի տարի է ես ծառայում եմ հասարակութեան տպագրական խօսքով, պաշտպանում եմ մեր ազգը... ը՛ը, է՛ը, մոռացայ... հա, ես պաշտպանում եմ մեր ազգի շահերին պատկանող կուսակցութեան և ընթերցողների մէջ ցանում էի... ինչպէս ասեմ... ճշմարտութեան, սիրոյ և ազատութեան սերմեր։

—Դուք ինչպէս կարող էք ինձ հասնել—ո՞ւր ես, և ո՞ւր դուք,—լուրջ կերպով նկատեց խոզի գլուխը։—Տեսնո՞ւմ էք ինձ՝ հսկում եմ կարգապահութեան վրայ, աշխատում եմ խռովարարների քօքը կտրել և հետամուտ եմ լինում ամեն տեսակ վտանգաւոր ընկերութիւններին... Հապա՞... ես այսպիսի մարդ եմ, գիտէ՞ք թէ չէ։

—Մէկ տեսէք, թէ էս խելքի տոպրակներն ինչ բաներով են պարծենում,—ընդհատեց նրանց թեթեւ վարքի տէր կինը, վրդովւած ու կարմրագեղով ներկած շրթունքները ուռցնելով,—եթէ կայ մէկը, որ ծառայում է հասարակութեան, այդ ես եմ. մինչև անգամ հրապարակախօսները ես մեզ անուանում են հասարակութեան զոհեր. իսկ ստրկանական պաշտօնեաները հօ, համարեա մի ամբողջ հաշւապահութիւն են պահում մեզ համար։

—Տօ դէ ձայներդ կտրեցէք, սատանի ճուտէր, է,—մռնչաց յանկարծ փախստականը։—Դուք բոլորդ էլ կեղծաւոր փարիսեցիներ էք։ Դէ հիմա տեսէք, թէ ես ով եմ... ես... մորթել եմ չորս մարդու, էլ չեմ հաշւելով կանանց և երեխաներին, բայց և այնպէս սուս եմ կենում... Ես իմ յանցանքս քաւում եմ։ Դուք փարիսեցիներ էք, իսկ ես Մաքսաւոր։ Իսկ չէ-որ Մաքսաւորին Քրիստոսն անգամ գովեց։ Ի՞նչ էք այդպէս ծուռ-ծուռ նայում, ինձ հօ չէ՞ք ուտելու։

Այդ ժամանակ խոզի-գլուխը նորից ասաց.

—Իմ յարգելի բարեկամներս, օրէնքով խօսենք, ինչպէս ասում են մեր վարչութեան մէջ։ Եկէք գտնենք տուող վարձատրողին. թող նա ասի թէ ու՞մն է ընծայել ոսկէ դրամը։

## ՆԿԱՐԻՉԸ

(Թարգմ.)

Նուէր՝ Հ. Նժմատուէլ Պէտրոսեանին

Նա անցնում էր մեծ և հին տան մօտով, որ գտնւում էր աղքատ և աղմկալից երկար փողոցի վրայ։ Ներքնայարկ բնակարաններից մէկի դռներում կանգնած էր մի խեղճ երիտասարդ կին, երեխան գրկին և երկուսը միասին, մայր և մանուկ՝ նայում էին դէպի անորոշ հեռուն, բարձր տների, գործարանների ծխնելոյզների և ձխնելոյզներից դուրս եկող թանձր ծխի միջով…

Երկուսի հայեացքներն էլ լուռ աղերսանք էին արտայայտում.—

«Տա՛ր մեզ այնտե՛ղ, այնտե՛ղ։ Այստեղ մեզ համար ծանր է, մենք շնչասպառ ենք լինում առանց օդի, առանց լոյսի…

Նրանց հայեացքների մէջ կար տխրութիւն, վիշտ, կարօտ…

Սա ինքն հէնց դժբախտութիւնն է, որ կայ-մտածեց նկարիչը։—Այս ինչ գեղեցիկ, ինչքան սրտաշարժ պատկեր է, տէր Աստուած։

Նա ոգևորւեց։ Նա մի անգամ էլ նայեց այդ կենդանի պատկերի վրայ և տեսաւ նոյն հայեացքները, նոյն տխրութիւնը, նոյն աղերսանքը՝ այնտե՛ղ, այնտե՛ղ… և, մի անհերքելի, խորհրդաւոր ոյժից հալածւածի նման՝ տուն փախեց։

Եւ պատկեր կը ստեղծեմ-բացականչեց նա, մտնելով իր արհեստանոցը։

Երեք օր նա կարծես մեխւած էր քաթանի վրայ. երեք օր չը կերաւ, չը խմեց և ոչ ոքի չերևաց.—Նա ուզում էր ստեղծել հէնց այն պատկերը, որը տեսաւ աղքատ, աղմկալից փողոցում։

Եւ այդ յաջողւեց նրան։

Երբ պատկերն արդէն պատրաստ էր՝ նայում էր նրա վրայ ներքին ուրախութեամբ. նա բախտաւոր էր, նրա աչքերը փայլում էին. նա կարծես, իրան համար ստեղծեց ոչ թէ պատկեր, այլ բախտաւորութիւն։ Նա պատկերի անունը դրեց «անբախտութիւն» և ուղարկեց ցուցահանդէս։

Քննադատները գովեցին պատկերը։ Նրանք զարմանում էին նկարի վրայ. հասարակութիւնը յափշտակւում էր։

Մի գիտնական և հարուստ մարդ, մեծ գումար տւեց և գնեց պատկերը։

Դուք անմահացրիք ձեզ/-տւաց նրան հետևեալ օրը մի յայտնի քննադատ – ձեր պատկերը կապրի յաւիտեան։

Նկարիչը ուղղակի շշմել էր երջանկութիւնից. Նա ստեղծեց մի գլուխ գործոց

Բայց հէնց առաջին երջանկութիւնից մի փոքր զգաստացաւ թէ չէ՝ նրա գլուխը մի տանջող միտք եկաւ։

—Որտե՞ղ է այն խեղճ կինը և երեխան։

Մի քիչ յետոյ միտքը աւելի թունալից դարձաւ։

—Պատկերը քաթանի վրայ անմահ է. բայց ինչ վիճակի մէջ է այժմ այն աղքատ փողոցի կենդանի պատկերը։

Եւ միտքն աւելի յամառ և տանջող էր դառնում. նա հանգստութիւն չէր տալիս նկարչին. նա նրան ստեղծագործելու չէր թողնում. մի բան նրան քշում, տանում էր դէպի այն կողմը, այն փողոցը. նա ցանկանում էր կրկին անգամ տեսնել այն խեղճ կնոջը։

Բայց աւա՜ղ… այլևս այնտեղ չէր խեղճ կինը, որ այնքան գեղեցիկ կերպով դիտում էր հեռուն, իւր փոքրիկ մանկան հետ միասին։

—Ո՞ւր է նա։ Ո՞ւր է նա—յուսահատւած հարցնում էր նկարիչը կնոջ մասին։

—Ո՞վ գիտէ - սառնութեամբ պատասխանեցին նրան։

—Հա՛, - հա՛,—հա՛,—անընդհատ կերպով բրբջաց նկարիչը՝ տուն վերադառնալուց յետոյ, քաթանի վրայ մնացած պատկերը պիտի ապրի յաւիտեան, իսկ նա իւր արուի, իւր զգացողութիւնների հետ միասին անյայտացաւ. մինչև անգամ ոչ ոք չը գիտէ, թէ ո՞ւր է նրա անկիւնը և ոչ ոք էլ չի իմանալու նրա անունն անգամ…

Թարգ. Տէր-Մնոյեան

---

Հասնելով դրամի ընծայողին հարցրին.

—Իսկ նա կանգ առաւ, մտածեց,—մտածեց, ապա չորսի էլ աչքերի մէջ նայելով ասաց.

—Ասէք դրամը ես նրա համար գցեցի, ով ամենքից վատն է։

Ասաց ու հեռացաւ։

Քէֆ անողները առաջւանից աւելի սկսեցին տաքանալ ու կռւել.

—Ամենքից վատը ես եմ։

—Կը ներես. ո՛չ թէ դու, այլ ես եմ։

—Ամենևին ոչ. ամենքից վատը ես եմ, ես։

—Ախր ինչո՞ւ համար։

—Հէնց նրա համար։

Եւ ապա սկսեցին, մէկ-մէկ, կարգով ապացուցանել ամեն մէկն իրա վատ լինելը։

—Ես,—ասաց կօկօտկան.—նրա համար եմ ամենքից վատ, որ փոխանակ հալալ աշխատանքով ապրելու, անառակութեան մէջ եմ ժամանակս անցկացնում։ Ես իմ մարմինս եմ ծախում, իմ սիրուն, ջահէլ մարմինս նրան, ով աւելի է տալիս… Դուք կարծում էք, այդ լաւ բան է. թշնամիս էլ չլինի իմ դրութեան մէջ։

—Հա՛, հա՛, հա՛, հա՛… հրճւաց խօսքի գլուխը։—Դու, սիրելիս, համեմատելով ինձ հետ, ուղղակի սուրբ ես։ Գիտե՞ս ես ինչ ցածութիւն եմ անում—լրտեսութիւն… Գաղափարի համար իրանց անձը զոհող ամենախիղախ մարդկանց հետամտելով մատնում եմ։ Զզւելի եմ ես, սիրելիք, զզւելի… Ես ընդունակ եմ… ոչ միայն մօրաքրոջս էլ մատնելու, այլև ծնողիս, քրոջս… հէ՜… Օ՜, որ իմանաք որքան եմ չարչարել մեր երկրի հեռաւոր մասերի համար բնակիչներ գտնելու, իսկ ցուրտ սառը բանտերի համար կեցողներ… և էլի ուրիշ շատ ու շատ բաների համար… այո, և որովհետև ես եմ ամենքից անպիտան ու ոչինչ մարդը, ապա ուրեմն դուք պարտաւոր էք ոսկէ դրամը ինձ զիջել։

—Հինգ հոգի—մէկ լաւ մտածեցէք, այ դուք կռապաշտներ. հինգ հոգի, չհաշւելով կանանց ու երեխաներին,—մի գլուխ իրանն էր պնդում արտարակաւը։ Ինչպէս որ ես մաքուր եմ, այնպէս էլ հոգի կորցնողներ, պարզ է ուրեմն… պէտք է ինձ տաք դրամը, որ հոգուս փրկութեան համար խմեմ։

Այն ժամանակ, մինչ այդ լռութեամբ մտիկ անող հրապարակախօս Յուդան, ասաց իր հանգիստ, քաղցր ու շոյիչ ձայնով.

—Ընկերներ, դուք իմ դէմ չէք կարող մրցել. եթէ մրցման գայ… ասում եմ, որ չէք կարող, իմ աղունակներ… Դու ասում ես որ մարմինդ ծախում էիր… Ինչ մի առանձին դժբաղդութիւն է, որ յիշում ես. իսկ ես իմ հոգին ծախեցի, ես իմ տաղանդն եմ ծախում… տարեկան 40 հազար րուբ. Ով աւելի վճարի—նրա համար էլ կը գրեմ. Քառասուն հազար—ով աւելի կըտայ —ազատական հրապարակախօս Յուդան, ճաւրքի ընտանող պաշտօնեայի նման. բայց ուշերբուելով, շարունակեց, դիմելով խօսքի գլխին.

—Հէնց դու ես… ինչացու ես դու ինձ մօտ։ Դու թշնամիներին ես ամբաստանել, ճիշտ՝ քո անցած ուղին թէև գեղեցիկ չէր, բայց գոնէ ուղիղ էր, իսկ ես… և այս կողմը, և այն կողմն էի ընկնում, ամբաստանութիւններ էի շարադրում աջ ու ձախ։ Ախր, ինչ ասեմ, է… միթէ միայն ամբաստանութիւններ եմ արել… Այդ յիմարն էլ շարունակ իր մորթած հինգ հոգուն է մէջ բերում և ասում է չհաշւելով կանանց և երեխաներին։ Ախր ինչ մի մեծ բան է այդ արածը։ Այն ինչ ես իմ հակահրէական գրգռիչ յօդւածներով այնպիսի ջարդեր եմ աջողեցել, որ հարիւրաւոր հրէաներին մորթում էին, կանանց արգանդներն էին ճղում ու մէջը փետուր ածում, երեխանց գլուխը պատերին խփելով ջարդում… Դէ հիմա թոյլ եմ տալիս, որ դուք ձեզանից ձախ կողմի վրայ դրած ասէք. այդ ոսկէ դրամը ի՞մն է թէ ոչ։

—Քոնն է,—պատասխանեցին միւս երեքն էլ ու տեղի տւին։

Այսպիսով Յուդան ստացաւ ոսկին, որ բաց ընթացիկ կուրսի, հաւասար էր երեսուն արծաթի, ինչով որ Յուդան մատնեց Քրիստոսին։

(«Սասո») Լև. Մ. Աղ.

## ԽՈՒՐԴԱ-ՄՈՒՐԴԱ

### Էքսպրոմտ

Ծառայողները հրաժեշտի ճաշ են տալիս իրանց ատելի կառավարչին։ Նրանցից մէկը վեր է կենում տեղից, վերցնում բաժակը և ասում,

—Պարոններ, այսօր մենք ճանապարհ ենք դնում մեր կառավարչին, որի նմանը երևի այլևս չենք ունենալ երբէք։ Բարի ճանապարհ... Տայ Աստուած, որ նրան իւր նոր պաշտօնատեղի ստորադրեալները դիմաւորեն այնպիսի անսահման ուրախութեամբ, ինչպիսի ուրախութեամբ մենք ճանապարհ ենք դնում։

### Ապակեղէնի խանութում

—Սուրճի այս հրաշալի սերւիզն արժէ 25 րուբլի, բայց որովհետև թասերից մէկը կոտրւած է, այդ պատճառով կարող եմ 10 րուբլի զիջել ձեզ և տալ 15 րուբլիով։

—Չի՞ կարելի արդեօք մի թասն էլ կոտրէք և տաք 5 րուբլով։

### Կանացի հիւանդութիւն

—Լսել եմ, իբր հիւանդ էք եղել, տիկին Աննա։

—Այո, լեզւի յոգնածութիւն ունէի... բժիշկն ասում է, ոչինչ վախենալու բան չկայ... այդ բաւականին տարածւած կանացի հիւանդութիւն է... բայց բժշկութիւնը չափազանց դժւար էր...

—Ի՞նչպէս։

—Ես ամբողջ երեք օր ստիպւած էի լուռ մնալ... կարո՞ղ էք երևակայել, թէ ինչպիսի տանջանք է այդ։

### Մեր կանայք

—Կարապետ, Կարապետ, ի սէր Աստուծոյ, շուտով վազիր բժշկի յետևից... ամուսինս մեռնում է... հա, չմոռանաս վերադառնալիս մտնել Արամեանի խանութը... ճանաչում ես, և ասել որ ուղարկեն ինձ համար ամենավերջին տարազի սգի հագուստի կրեպի նմուշները։

### Ճշմարիտ պատասխան.

—Ամենից առաջ Աստուած ստեղծեց տղամարդուն, իսկ յետոյ կնոջը։

—Իսկ ինչու համար նա առաջ կնոջը չը ստեղծեց։

—Որովհետև շատ լաւ գիտէր, որ կնոջ հետ ոչ մի բան չի կարելի սկսել։

Վթում.

## Ի Ն Տ Ե Ր Վ Ի Ւ

—Ալլահ սախլասըն, համշարի։

—Ալլահ սախլասըն աղաջան։

—Ես աղա չեմ, բարեկամ։

—Աղա ես, աղաջան, ես քու նոքարդ եմ։

—Անունդ ինչ է, համշարի։

—Ղուլի, քեզ նոքար։

—Երբ ես եկել Իրանից։

—Այս օր, աղա ջան։

—Թոյլ կտաս, քեզ ինտերւիւ անեմ, այսինքն մի քանի բաներ հարցնեմ, որոնց պիտի ճշմարիտ պատասխան տաս։

—Ես քու նոքարդ եմ, ինչ՞ պիտի սուտ ասեմ։

—Ձեր երկրի վերջին խառնակութիւններից տեղեկութիւն ունե՞ս։

Իրանցի չե՞մ, Իրանում մարդ մնաց որ խառնակութիւններին մասնակից եղած չլինի։

—Դու շահի կողմն էի՞ր, թէ յեղափոխականների։

—Երկուսի էլ տունն Աստուած քանդէ, ես ոչ մէկի կողմն էլ չէի, ես մեր աղի կողմն էի։

—Ձեր աղէն ո՞վ է.

—Մեր գիւղի աղէն է, Մանսուր խանը. քառասուն գիւղ ունի. անհամար հարստութիւն. շատ ղոչաղ և լաւ մարդ է. բոլորը նրանից վախենում են, ուռի պէս դողում։

—Մանսուր աղէն ո՞րի կողմն էր. շահի թէ յեղափոխականների։

—Մանսուր աղէն ինքն իրա կողմն էր։

—Ի՞նչպէս թէ ինքն իրա կողմն էր, լաւ որ չէր միանում մէկին ու մէկին։

—Ինչու պիտի միանար, օգուտ չունէր միանալուց, ընդհակառակը երկուսի մարդկանցն էլ իրա գիւղերից հալածում էր։

—Դուք, գիւղացիներդ ո՞րի կողմն էիք.

—Ասացի, որ մենք մեր աղի կողմն էինք։

—Ինչ՞ շահի կողմը չէիք բռնում։

—Ինչի համար շահի կողմը բռնէինք, նրա սարբազները մեզ միշտ կեղեքել են։

—Այդ դէպքում անցնէիք յեղափոխականների կողմը։

—Աղա ջան, դու կարծում ես յեղափոխականները մեզ չե՞ն կեղեքում։

—Ես կարծում եմ ձեր Մանսուր խանն էլ է ձեզ կողոպտում։

—Ի հարկէ, աղա կարծում ես նա ինչայճում է

—Ապա էլ ինչու էիք նրա կողմը բռնում։

—Մենք մտածում էինք, որ ամենից ձեռնտու է կողոպտւել մեր աղի կողմից։

—Կարելի՞ է բացատրէք ինչու համար։

—Շատ հասարակ պատճառով։ Շահի սարբազներն ու յեղափոխականները մնայուն մարդիկ չեն, նրանք շուտ շուտ երևում ու չքանում են, այն ինչ մեր աղէն, իր մուշիրներն ու նոքարները, միշտ մեր գըլխի վերև կանգնած են։ Պէտք է խոստովանել միևնոյն ժամանակ, որ մեր աղի նոքարներն աւելի լաւ են կռւում մեր ունեցածի համար սարբազների ու յեղափոխականների դէմ, քան թէ մենք։

—Ի՞նչ պատճառով։

—Մեր աղի նոքարները չեն թողնում սարբազներին ու յեղափոխականներին մեզ կողոպտել, որպէս զի միայն իրանք կողոպտեն։

—Իրանի շահն էլի հզօ՞ր է։

—Աշխարհի ամենահզօր թագաւորն՝ էլի Իրանի շահն է։

—Դու սիրում ես շահին։

—Շահն իմ ազգականը չէ, ինչու պիտի սիրեմ։

Շահն իր ժողովրդին սիրում է։

—Ինչու պիտի սիրէ։

—Շահը որ այդչափ հզօր է, հապա ինչու Սաթթար խանն ու Բաղր խանը այդպէս նեղ տեղ լծեցին նրան։

—Դրանք էլ շատ հզօր ու ղոչաղ մարդիկ են։

—Դուք սիրում էք ձեր մոլլաներին, ախունդներին, սէիդներին, մէկ խօսքով հոգևորականներին։

—Աստուած ազատէ դրանց ներկայութիւնից, դրանք սիրելու ապրանք են։

—Ապա ինչու էք բաժ ու հասոյթ տալիս։

—Մենք չենք տալիս, իրանք առնում են ծեծելով, սպանելով, աղաչելով։

—Դու մեր երկրում ուրիշ անգամ էլ եղե՞լ ես։

—Մէկ տարի առաջ էլ այստեղ էի։

Մեր երկրում շատ հարուստներ կա՞ն, թէ Իրանում։

—Իրանում հարուստ մարդիկ քիչ են, բայց ամեն մէկն ունի հարիւր, երկու հարիւր միլիոն։ Այստեղ այնպիսի հարուստներ չկան։ Այստեղ հարստութիւնը բաժանւած է շատերի վերայ։

—Հասարակ ժողովուրդն այստեղ է լաւ ապրում, թէ Իրանում։

—Ի հարկէ այս տեղ։ Այստեղ ամեն օր մարդ կարող է կուշտ փորով ցամաք հաց ուտել։

—Հապա ասում են իրանցիք փլաւ շատ են սիրում։

—Ցամաք հաց աւելի շատ են սիրում։

—Յեղափոխութիւնը չպիտի՞ կարողանայ այնպիսի դրութիւն ստեղծել, որ ժողովուրդը կուշտ փորով ցամաք հաց ուտէ։

—Յեղափոխականները միայն իրանց փորի վերայ են մտածում, ժողովրդի քաղցած փորը նրանց ինչ պէտքն է։

—Հապա յեղափոխականներն իրանց թռուցիկների մէջ շարունակ ժողովրդի բարեկեցութեան անունից են խօսում։

—Ճշմարիտ է։

—Դու քեզ հակասում ես, եղբայր Ղուլի։

—Չեմ հակասում, աղա ջան. յեղափոխականները ժողովուրդ համարում են, կամ աւելի ուղիղն ասած՝ ճանաչում են միայն իրանց. չէզոք տարր գոյութիւն չունի նրանց համար, ով յեղափոխական չէ, համարւում է հակայեղափոխական։

—Փաստեր ունե՞ս այդ մասին։

—Ինչու չունեմ։ Կռիւների ժամանակ յեղափոխականներն ահագին կողոպուտ ձեռք բերին, բայց այդ կողոպուտներից մի չոփ անգամ չտւին իրանց շուրջը քաղցածութիւնից մեռնողներին։ Այնքան մարդիկ յեղափոխութեան ժամանակ անօթութիւնից մեռան.

—Ուրեմն յեղափոխութիւնը ժողովրդին ոչ մի օգուտ չպիտի բերէ։

—Ժողովրդի համար միևնոյնն է, թէ իշխանութիւնն ում ձեռք կլինի։

Իսկ եթէ իշխանութիւնը ժողովրդի ձեռքը անցնի, այսինքն նրա ընտրածների, էլի միևնոյնը կը մնայ։

—Ի հարկէ, աղա ջան. անունով միայն կլինեն ժողովրդից ընտրուածներ, բայց դարձեալ կնոյնին երկար ճանկեր ու սուր ժանիքներ ունեցողները։

—Ապա քու կարծիքով ինչպէս պէտք է լինի, որ Իրանի համար լաւ լինի։

Իրանի համար լաւ կլինի, եթէ բաժանեն Ռուսի և Անգլիայի մէջ։

—Բա չէ՞ք ափսոսում ձեր անկախ թագաւորութիւնը, ինքնուրոյնութիւնը։

Ինչներիս է պէտք անկախութիւնն ու ինքնուրոյնութիւնը, երբ ցամաք հացի համար կոտորւում ենք և ձեռք չի ընկնում։

ՄԻԼԻՕՆԵՐ

## ՀԵՌԱԳՐՆԵՐ

Կ. Պոլիս 10 յուլիսի

Տաճկական Պարլամենտին։ Սրտանց շնորհաւորում եմ սահմանադրութեան տարեդարձը։ Անպայման կարող էք հաւատալ անկեղծութեանս, որովհետև կատարելապէս համոզուած եմ, թէ սահմանադրութեան հռչակելով, զգալի փոփոխութիւն չէ կատարուել պաշտելի հայրենիքիս կառավարչական ձևի մէջ։ Եթէ մինչև մարտի 31-ը գիտենայի, թէ այդպէս էր լինելու, երբէք յայտնի դաւադրութիւնը չէի կազմիլ.

ex Սուլթան Աբդուլ Համիդ

## ՊՈՍՏ-ԱՐԿՂ

Դերբենդ. Վուրգին.—Որովհետև ասում էք, թէ շատ շնորհակալ կլինէք, եթէ յայտնենք ձեր «Մօղա ենկու» ոտանաւորը կը տպէինք թէ ոչ. յայտնում ենք. անպէտք է, չի տպւիլ։ Ցայս ունենք, որ ձեր խոստման համաձայն շնորհակալ կլինէք և չէք նեղանալ, նեղանալու դէպքում կը տպենք։

Բալախանի.—Գրասեն. Մանթաշեանի ուչ. Տրուբեցկոյի. Տիգ. Բաղդասարեանին։ Եթէ երեք հազար ուղարկէիք, մենք էլ հազար «Խաթաբալա» կուղարկէինք, բայց քանի որ երեք ռուբլի էք ուղարկել, մենք էլ 1 հատ «Խաթաբալա» ուղարկեցինք Ձեզ, ձեր ցոյց տուած հասցէով։

Ալէքսանդրապօլ. Ուղերձ գրողին.—Ձեր գրածից բան չհասկացանք, երևի դուք էլ չէք հասկացել, թէ ինչ էք գրել։ Խնդրում ենք ստորագրութիւնը նորից կարդալ և եթէ մի բան կը հասկանաք, մեզ էլ հաղորդէք։

Սարայի. Սարայցի-Ինգօղին.—Ձեր գրածը թէև սրամտութիւնից զուրկ չէ, բայց այնքան անհասկանալի է, որ մէջի սրամտութիւնը նսեմանում է։ Գրեցէք հայերէն, փառք Աստուծոյ, դուք խօ հայ թերթի խմբագիր չէք, որ հայերէն չգիտենաք։

Թիֆլիզ. Վերա. Կ. Ղ.—25-30 մանէթանոց գողութեան մասին լրագրները ոչինչ չեն տպում, լաւ են անում, ինչի են գողանալ տալիս։ Ուրիշ բան է, եթէ 25,000—30,000 ր. ապրանք գողացուէր. այդ դէպքում այնքան հարայ-հրոց կը բարձրացուի, որ ապրանքը ինքն իրեն կըյայտնուի, այդպիսի լուրեր կարելի է տպել։

Նոր-Բուխարա. Հ. Մելիք-Եղիզար. Ձեր հասցէով կանոնաւոր ուղարկւում է, կարծում ենք մինչև այժմ ստացած պիտի լինէք։ Եթէ նորից նամակ գրելու լինէք, խնդրում ենք ամսաթիւը չմոռանալ։

## ՆՈՐ ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ

Ալէքսանդրապօլի Հ. Ս. Փր. Տղայոց դպրոցի ուսումն. եւ տնտ. Տեղեկագիր 1908—09 թ.

—

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Ռ. Խանազատ եւ Գ. Վարդանեան
1909 Թիֆլիզ.


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.




Ստ. Լիսիցեանի, Յովհ. Թումանեանի ու Լ. Շանթի
ԿԱԶՄԱԾ

ԼՈՒՍԱԲԵՐ

Հայերէնի դասագիրք
Լոյս տեսան

Ա. տարի, երրորդ տիպ. 30 կ.
Բ. տարի, երկրորդ տիպ, բարեփոխ. 45 կ.
Երկուսն էլ ընդունուած կովկասեան շրջանի ուսումնարանական հոգաբարձուի կողմից, իբրև դասագիրք պետական դպրոցների համար։

Տպագրւում են.

Գ. տարի . . . . . 60 կոպ.
Դ. տարի . . . . . 75 կոպ.

Գլխաւոր պահեստներն են հետեւեալ գրախանութները. Թիֆլիսում «ԳՈՒՏՏԵՄԲԵՐԳ» և Կենտրոնական, Բաքւում «Сотрудникъ», Երևանում Յովհաննիսեանի և Շուշում Բ. Տէր-Սահակեանի։

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ"

Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
ՕՐԱԹԵՐԹԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.—Առաջնորդող յօդուածներ, ներքին տեսութիւն, գաւառական կեանք, թղթակցութիւններ, քրօնիկ, արտաքին տեսութիւն, առևտրա-արդիւնաբերական բաժին (բորսա և այլն). աշխատաւորական կեանք (աշխատանքի բորսա). մամուլ, թերթօն (գրական, քաղաքական, իրաւաբանական, մանկավարժական և այլն). թատրոն և գեղարուեստ, մատենախօսութիւն, դատաստանական, նամակ խմբագրութեան, յայտարարութիւններ և տեղեկատու։

ՍԵՓԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՀԵՌԱԳՐՆԵՐ

Օրաթերթը հրատարակւում է յուլիսի 5-ից (նոր. տարայ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ յուլիսի 5-ից մինչև տարուայ վերջը 4 ռուբլի, 3 ամիսը 2 ր. 50 կ. ամիսը 70 կ.։ Արտասահմանի համար մինչև տարուայ վերջը 6 ռուբլի։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція газеты «Сурандакъ»
Խմբագիր-հրատ. Աստ. Երիցեան.
Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԱՄԵՆ ԼԵԶՈՒՈՎ ԵՒ ՄԱՏՉԵԼԻ ԳՆԵՐՈՎ

Լոյս տեսաւ և վաճառւում է

**ՀԱՅԻ ԿՏՈՐ ԶԷՅԹՈՒՆՑՈՒՆ**

Գրական ժողովածու Գր. Չալխուշեանի խմբագրութեամբ. ի նպաստ սովեալ Զէյթունցիների.

Գինն է 2 րուբլի

Պահեստը Գր. Չալխուշեանի մօտ

Ростовъ н/Д. Б. Садовая № 174.

---



**Мамед-Али** шахъ

НАРОДНОЕ ДВИЖЕНІЕ
ВЪ КРАѢ ЛЬВА И СОЛНЦА

*Цѣна 1 рубль*

СКЛАДЫ ИЗДАНІЯ: *Тифлисъ* КН. ТОР. ГУТТЕМБЕРГ *Александрополь* ТИПОГР. „ШИРАКЪ"

АТРПЕТЪ

---

МАГАЗИНЪ

## *Композиція*

Тифлисъ Пушкинскій пассажъ № 8.



ГРОМАДНАЯ ЭКОНОМІЯ

шведскаго компо-зиціон. бѣлья.

→Носится не менѣе двухъ лѣтъ←

Постоянный большой выборъ свѣжаго товара

**Воротниковъ, манишекъ и манжетъ**

Единственный представитель для Тифлиса и ихъ окрестностей

по фабричнымъ цѣнамъ

передѣлка въ любой фасовъ безплатно

М. А. КАЛТАГЯНЦА

---



**ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ**

# „ՊՐՕՎՕԴՆԻԿ"

ԱՐՏՕՆԻԱԾ

*Ամենաբարձր Աջակցեամբ*

ԱՆՊԱՅՄԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐՈՒԹԻՒՆ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԶՈՅԳԻ ԱՆՕ-ՐԻՆԱԿ ԱՄՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ



*Ամենառաջին և ամենաբարձր ամրութեան, լաւ յարմարութեան, շքեղ ֆասօնների և ամենալաւ գործածւող նիւթերից*



ԱՐՏՕՆԻԱԾ

**ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԱՄԲՈՂՋ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ**

ԿՐԿՆԱԿՕՇԻԿՆԵՐ

# ՊՐՕՎՕԴՆԻԿ

ПРОВОДНИКЪ РИГА

1888

ՌՈՒՍ-ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

# Մ Ի Ւ Ն Խ Ե Ւ Վ Է Յ Ս

**ԹԻՖԼԻԶՈՒՄ ԵՒ ԲԱԳՈՒՈՒՄ**

Խմբագիր-Հրատարակող՝ ԱՍՏ. ԵՐԻՑԵԱՆ

Скоропечатная „Дзмоба" Московская ул. № 5.

Ս. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ (Վէհ. մօտ արտասանած ճառը)



—Ո՛ւր գնամ, երբ այսպէս խառնշփոթ է ուղիները և համոզմունքները։

ՍԱՐԴԱՐ ԱՍԱԴ



Այժմ Պարսկաստանում ամէն ինչ հանդարտ է։

## ԲԱԳՒՈՒՄ *մեր ինժիներները*



ԵՐԵՔ ՏԱՐԻ ԱՌԱՋ

—Ա՜խ ընկերներ, մենք ձեզ սիրում ենք, երդւում ենք ձեր ջլոտ բազուկներով որ մօտ է փրկութեան օրը...



ԵՐԵՔ ՏԱՐԻ ՅԵՏՈՅ, ՀԻՄԱՅ՝

—Մենք պէտք է հոգէ հան անենք այդ լիրբ բանւորներին, որովհետև դրանք չեն իմանում, թէ ովքեր ենք մենք...